# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 նոյեմբերի 2022 թվականի N 757

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԱՂԱՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 76 ՀԱՍՑԵԻՆ ԿԻՑ ԳՏՆՎՈՂ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Սարիբեկ Կարլենի Աբազյանի 29.06.2022թ. թիվ 6585 դիմումը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, «ԳՈՒԳԱՐԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍՊԸ-ի կողմից տրված հողամասի և շինության հատակագծերը, շինությունների բնութագիրը, ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից 26.07.2022թ. տրված հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր: 20223AW4AZ), «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից տրված 18.07.2022թ. թիվ ՎՆ 1- 73/22 Ի եզրակացությունը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 8-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի $14^3$-րդ հոդվածի 11, 12, 13, 14 մասերով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետով, ՀՀ կառավարության 2021թ. փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով՝ ***որոշում եմ.***

1. Ճանաչել Վանաձոր համայնքի սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Աղայան փողոց թիվ 76 հասցեին կից գտնվող ինքնակամ կառուցված, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված օրինականացման պայմաններին համապատասխանող 10.64քմ մակերեսով շինության և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 0.001064հա մակերեսով հողամասի նկատմամբ՝ համաձայն հատակագծի:

2. Ճանաչել օրինական սույն որոշման 1-ին կետում նշված հասարակական գործառնական նշանակությամբ ինքնակամ կառույցը:

3. Փոխել Վանաձոր քաղաքի Աղայան փողոց թիվ 76 հասցեին կից գտնվող 0.001064հա մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը՝ բնակավայրերի բնակելի կառուցապատման հողերից՝ հասարակական կառուցապատման հողերի:

4. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ 5-օրյա ժամկետում դիմել ՀՀ կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանում՝ սույն որոշման 1-ին կետում նշված ինքնակամ կառուցված շինության և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար:

5. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետ-գլխավոր ճարտարապետ Ս. Աբովյանին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գույքի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի գրանցումից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր առաջարկել սույն որոշման 1-ին կետում նշված շինությունների ինքնակամ կառուցումը իրականացրած անձին շինությունը և հողամասը ուղղակի վաճառքի ձևով օտարելու վերաբերյալ:

6. Վանաձոր քաղաքի Աղայան փողոց թիվ 76 հասցեին կից գտնվող գույքին տրամադրել փոստային հասցե՝ Վանաձոր Վանաձոր ք., Ղ. Աղայան փողոց թիվ 76/5 շինություն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2022թ. նոյեմբերի 03
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 նոյեմբերի 2022 թվականի N 758

## ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԱՂԱՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 76 ՀԱՍՑԵԻՆ ԿԻՑ ԳՏՆՎՈՂ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Սարիբեկ Կարլենի Աբազյանի 29.06.2022թ. թիվ 6585 դիմումը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, «ԳՈՒԳԱՐԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍՊԸ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, շինությունների բնութագիրը, ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից 26.07.2022թ. տրված հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր: 2022NASEYK), «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից տրված 18.07.2022թ. թիվ ՎՆ 1- 73/22 Ի եզրակացությունը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 8-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի $14^3$-րդ հոդվածի 11, 12, 13, 14 մասերով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետով, ՀՀ կառավարության 2021թ. փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով՝ ***որոշում եմ.***

1. Ճանաչել Վանաձոր համայնքի սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Աղայան փողոց թիվ 76 հասցեին կից գտնվող ինքնակամ կառուցված, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված օրինականացման պայմաններին համապատասխանող 8.83քմ մակերեսով շինության և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 0.000883հա մակերեսով հողամասի նկատմամբ՝ համաձայն հատակագծի:

2. Ճանաչել օրինական սույն որոշման 1-ին կետում նշված հասարակական գործառնական նշանակությամբ ինքնակամ կառույցը:

3. Փոխել Վանաձոր քաղաքի Աղայան փողոց թիվ 76 հասցեին կից գտնվող 0.000883հա մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը՝ բնակավայրերի բնակելի կառուցապատման հողերից՝ հասարակական կառուցապատման հողերի:

4. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ 5-օրյա ժամկետում դիմել ՀՀ կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանում՝ սույն որոշման 1-ին կետում նշված ինքնակամ կառուցված շինության և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար:

5. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետ-գլխավոր ճարտարապետ Ս. Աբովյանին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գույքի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի գրանցումից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր առաջարկել սույն որոշման 1-ին կետում նշված շինության ինքնակամ կառուցումը իրականացրած անձին շինությունը և հողամասը ուղղակի վաճառքի ձևով օտարելու վերաբերյալ:

6. Վանաձոր քաղաքի Աղայան փողոց թիվ 76 հասցեին կից գտնվող գույքին տրամադրել փոստային հասցե՝ Վանաձոր Վանաձոր ք., Ղ. Աղայան փողոց թիվ 76/3 շինություն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2022թ. նոյեմբերի 03
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

04 նոյեմբերի 2022 թվականի N 759

### ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 6 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՎԱՐՉԱԿԱՆ ՇԵՆՔԻՆ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վահրամ Խաչատուրի Ալթունյանի 20.10.2022 թվականի թիվ 02/13426 դիմումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 643108 վկայականը,անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր քաղաքի Հյուսիսային փողոց թիվ 6 հասցեում գտնվող վարչական շենքին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր ք.,Հյուսիսային փողոց, 6/1 վարչական շենք::

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2022թ. նոյեմբերի 04
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

04 նոյեմբերի 2022 թվականի N 760

«ՀՌԻՓՍԻԿ ԷՄԻՆԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՍԻՐՎԱՐԴ ՍԱՐԴԱՐՅԱՆԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**1. ՀՀ Վանաձոր համայնքի ղեկավարի որոշման կարգավորման առարկան.**

Վանաձոր համայնքի Տիգրան Մեծի 34/118 բնակարանի բնակչուհի Նարինե Գալստյանի դիմումի և Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի առևտրի և տրանսպորտը համակարգող բաժնի կողմից 29.09.2022 թվականին տրված զեկուցագրի և արձանագրության հիման վրա «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «ա» ենթակետի հիմքով հարուցվել է վարչական վարույթ՝ «ՀՌԻՓՍԻԿ ԷՄԻՆԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ» ՍՊԸ-ի տնօրեն Սիրվարդ Սարդարյանի կողմից «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 16916-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշով նախատեսված վարչական իրավախախտում կատարելու հիմքով:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

**2. Վարչական ակտ ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.**

Հիմք ընդունելով Վանաձոր համայնքի բնակիչ Նարինե Շուրիկի Գալստյանի /բնակության հասցե՝ Գր.Լուսավորչի փողոց թիվ 17/2, փաստացի բնակության հասցե՝ Տիգրան Մեծի պողոտա թիվ 34/118/, ս/թ սեպտեմբերի 26-ին համայնքի ղեկավարի պաշտոնակատարին ուղղված թիվ 02/11747 դիմումը, համայնքապետարանի աշխատակազմի առևտրի և տրանսպորտը համակարգող բաժնի աշխատակիցների կողմից հսկողություն է իրականացվել «ՀՌԻՓՍԻԿ ԷՄԻՆԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության գործող օբյեկտում, և կազմվել է համապատասխան արձանագրության, համաձայն որի «ՀՌԻՓՍԻԿ ԷՄԻՆԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն Սիրվարդ Սարդարյանի կողմից իրականացվել է ՀՀ օրենսգրքի 16916-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված արարք:

29 սեպտեմբերի 2022 թվականին հարուցված վարչական վարույթի հիման վրա 17 հոկտեմբերի 2022 թվականին հրավիրվել են վարչական վարույթի լսումներ, սակայն «ՀՌԻՓՍԻԿ ԷՄԻՆԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն Սիրվարդ Սարդարյանը վարչական լսումներին չի ներկայացել: Այնուհետև 20 հոկտեմբերի 2022 թվականին կրկին է «ՀՌԻՓՍԻԿ ԷՄԻՆԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն Սիրվարդ Սարդարյանը ծանուցվել : 2022 թվականի հոկտեմբերի 24-ին տեղի են ունեցել վարչական վարույթի լսումներ, որին ներկայացել է Սիրվարդ Սարդարյանի կողմից լիազորված անձ Արևիկ Խաչյանը, ով պնդում է որ տվյալ բողոքը իրենց հասցեին չի համապատասխանում իրականության հետ և

անհիմն է իրենց կողմից որևէ բան չի արվել, որը կարող է խանգարել բնակիչներին, դա զրպարտություն է և դրա հետ համաձայն չէ:

### 3. Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական իրավախախտում (զանցանք) է համարվում պետական կամ հասարակական կարգի, սոցիալիստական սեփականության, քաղաքացիների իրավունքների և ազատությունների, կառավարման սահմանված կարգի դեմ ոտնձգվող հակաիրավական, մեղավոր (դիտավորյալ կամ անզգույշ) այնպիսի գործողությունը կամ անգործությունը, որի համար օրենսդրությամբ նախատեսված է վարչական պատասխանատվություն:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 10-րդ հոդվածի համաձայն՝ վարչական իրավախախտումը համարվում է դիտավորությամբ կատարված, եթե այն կատարող անձը գիտակցել է իր գործողության կամ անգործության հակաիրավական բնույթը, կանխատեսել է դրա վնասակար հետևանքները և ցանկացել դրանք, կամ գիտակցաբար թույլ է տվել այդ հետևանքների առաջացումը:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 32-րդ հոդվածի դրույթների համաձայն՝ վարչական իրավախախտման համար տույժը նշանակվում է կատարված իրավախախտման համար պատասխանատվություն նախատեսող նորմատիվ ակտով սահմանված շրջանակներում, «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքին և վարչական իրավախախտումների վերաբերյալ մյուս ակտերին ճիշտ համապատասխան: Տույժ նշանակելիս հաշվի են առնվում կատարված իրավախախտման բնույթը, խախտողի անձը, նրա մեղքի աստիճանը, գույքային դրությունը, պատասխանատվությունը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 40-րդ հոդվածի համաձայն՝ վարչական տույժ նշանակելը վարչական իրավախախտում կատարած անձին չի ազատում այն պարտականության կատարումից, որը չկատարելու համար նշանակվել էր վարչական տույժ:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 16916-րդ հոդվածի 2-ին մասի համաձայն՝ առևտրի և հանրային սննդի օբյեկտները, զվարճանքի, շահումով խաղերի, վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, խաղատները և բաղնիքները (սաունաները) առանց թույլտվության ժամը 24.00-ից հետո աշխատեցնելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից մինչև երեքհարյուրապատիկի չափով:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 2191-րդ հոդվածի համաձայն՝ տեղական ինքնակառավարման մարմինները իրենց իրավասության սահմաններում քննում են օրենսգրքի 16916-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը: Համայնքի ղեկավարը տեղական ինքնակառավարման մարմինների անունից նշված հոդվածի վերաբերյալ գործեր քննելու և վարչական տույժ նշանակելու իրավունք ունի:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 40-րդ, 16916-րդ հոդվածի 1-ին մասով, 2191-րդ, 245-րդ, 279-րդ հոդվածներով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետով, 53-րդ, 58-60-րդ հոդվածներով և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով.

### ՈՐՈՇԵՑԻ

1. «ՀՌԻՓՍԻԿ ԷՄԻՆԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն Սիրվարդ Սարդարյանին ենթարկել վարչական պատասխանատվության՝ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 16916-րդ հոդվածի 2-ին մասով նախատեսված արարք կատարելու համար և նշանակել տուգանք՝ 200 000 ( երկու հարյուր հազար) ՀՀ դրամ:

2. Պարտավորեցնել անհատ ձեռնարկատեր Սիրվարդ Սարդարյանին տուգանքի գումարը վճարել 900235401537 հաշվեհամարին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում վարչական ակտի հասցեատիրոջն իրազեկելուն հաջորդող օրվանից:

4. Սույն որոշումը համարվում է վարչական ակտի հասցեատիրոջը հանձնված (պատշաճ ծանուցված) նաև որոշման մասին ծանուցումն Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում (azdarar.am) տեղադրելու օրվան հաջորդող հինգերորդ օրը:

5. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Վանաձոր համայնքի ղեկավարին դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:

6. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ ՀՀ ԱՆ հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

7. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն իրականացնում է Վանաձոր համայնքի ղեկավարը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ** **Ա. ՓԵԼԵՇՅԱՆ**

2022թ. նոյեմբերի 04
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 նոյեմբերի 2022 թվականի N 761

## «ՀՈՒՓՍԻԿ ԷՄԻՆԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՍԻՐՎԱՐԴ ՍԱՐԴԱՐՅԱՆԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**1. ՀՀ Վանաձոր համայնքի ղեկավարի որոշման կարգավորման առարկան.**

Վանաձոր համայնքի Տիգրան Մեծի 34/118 բնակարանի բնակչուհի Նարինե Գալստյանի դիմումի և Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի առևտրի և տրանսպորտը համակարգող բաժնի կողմից 29.09.2022 թվականին տրված զեկուցագրի և արձանագրության հիման վրա «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «ա» ենթակետի հիմքով հարուցվել է վարչական վարույթ՝ «ՀՈՒՓՍԻԿ ԷՄԻՆԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ» ՍՊԸ-ի տնօրեն Սիրվարդ Սարդարյանի կողմից «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 16916-րդ հոդվածի 1-րդ մասի հատկանիշով նախատեսված վարչական իրավախախտում կատարելու հիմքով:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

**2. Վարչական ակտ ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.**

Հիմք ընդունելով Վանաձոր համայնքի բնակիչ Նարինե Շուրիկի Գալստյանի /բնակության հասցե՝ Գր.Լուսավորչի փողոց թիվ 17/2, փաստացի բնակության հասցե՝ Տիգրան Մեծի պողոտա թիվ 34/118/, ս/թ սեպտեմբերի 26-ին համայնքի ղեկավարի պաշտոնակատարին ուղղված թիվ 02/11747 դիմումը, համայնքապետարանի աշխատակազմի առևտրի և տրանսպորտը համակարգող բաժնի աշխատակիցների կողմից ստուգություն է իրականացվել «ՀՈՒՓՍԻԿ ԷՄԻՆԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության գործող օբյեկտում, և կազմվել է համապատասխան արձանագրություն, համաձայն որի «ՀՈՒՓՍԻԿ ԷՄԻՆԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն Սիրվարդ Սարդարյանի կողմից իրականացվել է ՀՀ օրենսգրքի 16916-րդ հոդվածի 1-րդ մասով նախատեսված արարք:

29 սեպտեմբերի 2022 թվականին հարուցված վարչական վարույթի հիման վրա 17 հոկտեմբերի 2022 թվականին հրավիրվել են վարչական վարույթի լսումներ, սակայն «ՀՈՒՓՍԻԿ ԷՄԻՆԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն Սիրվարդ Սարդարյանը վարչական լսումներին չի ներկայացել: Այնուհետև 20 հոկտեմբերի 2022 թվականին կրկին է «ՀՈՒՓՍԻԿ ԷՄԻՆԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն Սիրվարդ Սարդարյանը ծանուցվել : 2022 թվականի հոկտեմբերի 24-ին տեղի են ունեցել վարչական վարույթի

լսումներ, որին ներկայացել է Սիրվարդ Սարդարյանի կողմից լիազորված անձ Արևիկ Խաչյանը, ով պնդում է որ տվյալ բողոքը իրենց հասցեին չի համապատասխանում իրականության հետ և անհիմն է իրենց կողմից որևէ բան չի արվել, որը կարող է խանգարել բնակիչներին, դա զրպարտություն է և դրա հետ համաձայն չէ:

**3. Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.**

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական իրավախախտում (զանցանք) է համարվում պետական կամ հասարակական կարգի, սոցիալիստական սեփականության, քաղաքացիների իրավունքների և ազատությունների, կառավարման սահմանված կարգի դեմ ոտնձգվող հակաիրավական, մեղավոր (դիտավորյալ կամ անզգույշ) այնպիսի գործողությունը կամ անգործությունը, որի համար օրենսդրությամբ նախատեսված է վարչական պատասխանատվություն:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 10-րդ հոդվածի համաձայն՝ վարչական իրավախախտումը համարվում է դիտավորությամբ կատարված, եթե այն կատարող անձը գիտակցել է իր գործողության կամ անգործության հակաիրավական բնույթը, կանխատեսել է դրա վնասակար հետևանքները և ցանկացել դրանք, կամ գիտակցաբար թույլ է տվել այդ հետևանքների առաջացումը:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 32-րդ հոդվածի դրույթների համաձայն՝ վարչական իրավախախտման համար տույժը նշանակվում է կատարված իրավախախտման համար պատասխանատվություն նախատեսող նորմատիվ ակտով սահմանված շրջանակներում, «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքին և վարչական իրավախախտումների վերաբերյալ մյուս ակտերին ճիշտ համապատասխան: Տույժ նշանակելիս հաշվի են առնվում կատարված իրավախախտման բնույթը, խախտողի անձը, նրա մեղքի աստիճանը, գույքային դրությունը, պատասխանատվությունը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 40-րդ հոդվածի համաձայն՝ վարչական տույժ նշանակելը վարչական իրավախախտում կատարած անձին չի ազատում այն պարտականության կատարումից, որը չկատարելու համար նշանակվել էր վարչական տույժ:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 16916-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ առանց թույլտվության ոգելից և (կամ) ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառք իրականացնելը, իսկ հանրային սննդի օբյեկտներում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների իրացում իրականացնելը՝առաջացնում են տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից մինչև երկուհարյուրապատիկի չափով:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 2191-րդ հոդվածի համաձայն՝ տեղական ինքնակառավարման մարմինները իրենց իրավասության սահմաններում քննում են օրենսգրքի 16916-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը: Համայնքի ղեկավարը տեղական ինքնակառավարման մարմինների անունից նշված հոդվածի վերաբերյալ գործեր քննելու և վարչական տույժ նշանակելու իրավունք ունի:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 40-րդ, 16916-րդ հոդվածի 1-ին մասով, 2191-րդ, 245-րդ, 279-րդ հոդվածներով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետով, 53-րդ, 58-60-րդ հոդվածներով և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով.

ՈՐՈՇԵՑԻ

1. «ՀՌԻՓՍԻԿ ԷՄԻՆԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն Սիրվարդ Սարդարյանին ենթարկել վարչական պատասխանատվության՝ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 16916-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարք կատարելու համար և նշանակել տուգանք՝ 100 000 ( հարյուր հազար) ՀՀ դրամ:

2. Պարտավորեցնել անհատ ձեռնարկատեր Սիրվարդ Սարդարյանին տուգանքի գումարը վճարել 900235401537 հաշվեհամարին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում վարչական ակտի հասցեատիրոջն իրազեկելուն հաջորդող օրվանից:

4. Սույն որոշումը համարվում է վարչական ակտի հասցեատիրոջը հանձնված (պատշաճ ծանուցված) նաև որոշման մասին ծանուցումն Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում (azdarar.am) տեղադրելու օրվան հաջորդող հինգերորդ օրը:

5. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Վանաձոր համայնքի ղեկավարին դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:

6. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ ՀՀ ԱՆ հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

7. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն իրականացնում է Վանաձոր համայնքի ղեկավարը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2022թ. նոյեմբերի 04
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

07 նոյեմբերի 2022 թվականի N 762

### ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ «ԹԱԳՈՒՀԻ ԲԱՐՍԵՂՅԱՆ ՍԱՇԻԿԻ»-Ն ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր «ԹԱԳՈՒՀԻ ԲԱՐՍԵՂՅԱՆ ՍԱՇԻԿԻ» 2022 թվականի նոյեմբերի 04-ի թիվ 01/14497 հայտը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով և «Գովազդի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ պարբերությամբ՝ *որոշում եմ.*

1. Բավարարել Վանաձոր քաղաքի Վարդանանց փող. թիվ 49 հասցեում գործող անհատ ձեռնարկատեր «ԹԱԳՈՒՀԻ ԲԱՐՍԵՂՅԱՆ ՍԱՇԻԿԻ» հայտը՝ ավագանու սահմանած դրույքաչափերին համապատասխան համայնքի վարչական տարածքում՝ Վարդանանց փող. թիվ 122 հասցեում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության և պայմանագիր կնքելու մասին:
2. Համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ եռօրյա ժամկետում հայտատուին տրամադրել համապատասխան թույլտվություն:
3. Համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ սահմանված կարգով հայտատուի հետ կնքել համապատասխան պայմանագիր:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ԱՐԿԱԴԻ ՓԵԼԵՇՅԱՆ

2022թ. նոյեմբերի 07
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

07 նոյեմբերի 2022 թվականի N 763

## ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ «ՍԱԹԻՆԵ ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆ ՎՐՈՒՅՐԻ»-Ն ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր «ՍԱԹԻՆԵ ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆ ՎՐՈՒՅՐԻ» 2022 թվականի նոյեմբերի 03-ի թիվ 01/14468 հայտը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով և «Գովազդի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ պարբերությամբ՝ *որոշում եմ.*

1. Բավարարել Վանաձոր քաղաքի Վարդանանց փող. թիվ 102/1 հասցեում գործող անհատ ձեռնարկատեր «ՍԱԹԻՆԵ ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆ ՎՐՈՒՅՐԻ» հայտը՝ ավագանու սահմանած դրույքաչափերին համապատասխան համայնքի վարչական տարածքում՝ Վարդանանց փող. թիվ 102/1 հասցեում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության և պայմանագիր կնքելու մասին:
2. Համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ եռօրյա ժամկետում հայտատուին տրամադրել համապատասխան թույլտվություն:
3. Համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ սահմանված կարգով հայտատուի հետ կնքել համապատասխան պայմանագիր:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2022թ. նոյեմբերի 07
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Փաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

07 նոյեմբերի 2022 թվականի N 764

### ՀՐԱՅՐ ԽԵՉՈՅԻ ՍՈՍՅԱՆԻՆ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼԻ ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հրայր Խեչոյի Սոսյանի դիմումը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 57-րդ հոդվածի 4-րդ մասով, «Վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքի 2-րդ հավելվածի 2.5 կետով՝ ***որոշում եմ.***

1. Հրայր Խեչոյի Սոսյանին 2022 թվականի նոյեմբերի 07-ից ազատել Շահումյան համայնքի ղեկավարի տեղակալի պաշտոնից:

2. Հրայր Խեչոյի Սոսյանին երկարամյան և բարեխիղճ աշխատանքի համար պարգևատրել մեկ ամսվա պաշտոնային դրույքաչափով

3. Շահումյանի համայնքապետարանին՝ կատարել վերջնահաշվարկ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ԱՐԿԱԴԻ ՓԵԼԵՇՅԱՆ

2022թ. նոյեմբերի 07
ք.Վանաձոր

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

07 նոյեմբերի 2022 թվականի N 765

### ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՉՈՒԽԱՋՅԱՆ ՓՈՂ ԹԻՎ 28 ՇԵՆՔԻ ԹԻՎ 16 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆԻՆ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Լուսիկ Մնացականի Օրդյանի դիմումը, անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1848427 վկայականը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր քաղաքի Չուխաջյան փող թիվ 28 շենքի թիվ 16 հասցեում գտնվող բնակարանին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր Վանաձոր ք., Տ. Չուխաջյան թաղամաս, 28 շենք, 16 բնակարան:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ԱՐԿԱԴԻ ՓԵԼԵՇՅԱՆ

2022թ. նոյեմբերի 07
ք.Վանաձոր

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

09 նոյեմբերի 2022 թվականի N 766

### ՎԱՆԱՁՈՐ ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԼԱԶՅԱՆ ՓՈՂՈՑ 23 ՇԵՆՔ, 1 ԵՎ 5 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԻՆ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արման Մարտունի Խաչատրյանի, Քրիստինե Գագիկի Ամրոյանի դիմումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 25102022-06-0026 վկայականը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր Վանաձոր քաղաքի Լազյան փողոց 23 շենք, 1 և 5 հասցեում գտնվող բնակարաններին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր Վանաձոր ք., Ս. Լազյան փողոց, 23 շենք, 1,5 բնակարան:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2022թ. նոյեմբերի 09
ք.Վանաձոր

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

09 նոյեմբերի 2022 թվականի N 767

### ՎԱՆԱՁՈՐ ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ Հ. ՆԵՐՍԻՍՅԱՆ ԹԱՂԱՄԱՍ 3 ՇԵՆՔ, 25 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆԻՆ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հովիկ Սերգեյի Թումանյանի 19.10.2022 թվականի թիվ 02/13253 դիմումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 14102022-06-0036 վկայականը,անշարժ գույքի բնակարանի առուվաճառքի թիվ 3898 պայմանագիր (նոտարական ակտի կոդ: 763-20220704-2-6048092) անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր Վանաձոր քաղաքի Ներսիսյան թաղամաս 3 շենք,25 հասցեում գտնվող բնակարանին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր Վանաձոր ք., Հ. Ներսիսյան փողոց,1-ին փակուղի, 3 շենք, 25 բնակարան:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2022թ. նոյեմբերի 09
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

09 նոյեմբերի 2022 թվականի N 768

### ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԵՐԵՎԱՆՅԱՆ ԽՃՈՒՂԻ ԹԻՎ 90/8 ՀԱՍՑԵԻ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՄԱՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր քաղաքի Երևանյան խճուղի թիվ 90/8 հասցեի արևմտյան մասում գտնվող 0.00345հա մակերեսով հողամասին տրամադրել փոստային հասցե՝ Վանաձոր Վանաձոր ք., Երևանյան խճուղի, 90/1 հողամաս:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2022թ. նոյեմբերի 09
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

09 նոյեմբերի 2022 թվականի N 769

### «ՎԱՀԵ ԷԼԵԿՏՐՈՆԻՔՍ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «ՎԱՀԵ ԷԼԵԿՏՐՈՆԻՔՍ» ՍՊԸ-ի տնօրեն Վահրամ Ծատինյանի 2022 թվականի նոյեմբերի 08-ի թիվ 01/14674 հայտը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով և «Գովազդի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ պարբերությամբ՝ *որոշում եմ*

1.Բավարարել Վանաձոր քաղաքի Դեմիրճյան փող. թիվ 28/17 հասցեում գործող «ՎԱՀԵ ԷԼԵԿՏՐՈՆԻՔՍ» ՍՊԸ-ի տնօրեն Վահրամ Ծատինյանի հայտը՝ ավագանու սահմանած դրույքաչափերին համապատասխան համայնքի վարչական տարածքում՝ Գր.Լուսավորչի փող. թիվ 52 հասցեում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության և պայմանագիր կնքելու մասին:
2. Համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ եռօրյա ժամկետում հայտատուին տրամադրել համապատասխան թույլտվություն:
3. Համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ սահմանված կարգով հայտատուի հետ կնքել համապատասխան պայմանագիր:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ԱՐԿԱԴԻ ՓԵԼԵՇՅԱՆ

2022թ. նոյեմբերի 09
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am


# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

09 նոյեմբերի 2022 թվականի N 770

## ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԾԱՌԵՐԻ ՀԱՏՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վանաձոր համայնքի տարածքում գտնվող չորացած, գերհասուն, սանիտարական նորմերին չհամապատասխանող, հատման ենթակա ծառերն ուսումնասիրելու նպատակով ստեղծված հանձնաժողովի կողմից 21.10.2022 թվականին կազմված արձանագրությունները, «Նեցուկ ՀՁ» ՀՈԱԿ-ի տնօրեն, հանձնաժողովի նախագահ Հայկ Համբարձումյանի 21.10.2022 թվականի թիվ 03Ա/25, 03Ա/26, 03/Ա27 և 03Ա/28 զեկուցագրերը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 51-րդ հոդվածով, «Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածով՝ ***որոշում եմ.***

1. Տալ թույլտվություն Վանաձոր համայնքի Տիգրան Մեծի 67/1-1 հասցեում առկա 3 /երեք/ կիսաչոր եղևնիների, Մխիթար Գոշ փողոցի 2-6 հասցեում գտնվող խանութի դիմաց 1 /մեկ/ չորացած ծառի, Վարդանանց 46 տան դիմաց, կանգառին կից 1 /մեկ/ չորացած ծառի, Սանկտ-Պետերբուրգի փողոցի 2/2-2 տան բնակիչ Հ. Խառատյանի տարածքին կից 1 /մեկ/ առկա վտանգ ներկայացնող ծառի հատման համար:

2.«Նեցուկ ՀՁ» ՀՈԱԿ-ին իրականացնել վերոնշյալ ծառերի հատման աշխատանքները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2022թ. նոյեմբերի 09
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09 նոյեմբերի 2022 թվականի N 771

## ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՅՈՒՂ ԳՈՒԳԱՐՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՐՄԵՆ ՄԱՐՏՈՒՆԻ ԱՂԱՋԱՆՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արմեն Մարտունի Աղաջանյանի (ծնված՝ 31.10.1975թ.) դիմումը, 24.08.2022թ. տրված քաղվածքը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, «ԱՐՏՅՈՄ ՍԱՔԱՆՅԱՆ ՌՈՒԴԻԿԻ» ԱՁ-ի կողմից տրված հողամասի, շինությունների հատակագիծը, շինությունների բնութագիրը, Լոռու մարզի Գուգարք համայնքի հողային բարեփոխումների և սեփականաշնորհման հանձնաժողովի 21.11.1991թ. թիվ 11 որոշման քաղվածքը, «Լոռու մարզի Գուգարք համայնքի տնամերձ և սեփականաշնորհված հողերի վերաբերյալ» մատյանի թիվ 32 էջի վավերացված պատճենը, և հաշվի առնելով այն, որ Վանաձոր համայնքի գյուղ Գուգարքում կառուցած բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 2338.9քմ հողամասը, դրա վրա կառուցված բնակելի նշանակության շինությունները չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ: Անհատական բնակելի տունը կառուցվել է 1991-2000թթ.-ին, բնակելի տան զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ հողամասի մակերեսը փաստացի կազմում է 2338.9քմ: Ղեկավարվելով 10.06.2008թ. «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2021թ. փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշման 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ ***որոշում եմ.***

1. Ճանաչել Արմեն Մարտունի Աղաջանյանի սեփականության իրավունքը Վանաձոր համայնքի գյուղ Գուգարքում գտնվող բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 2338.9քմ մակերեսով հողամասի նկատմամբ:
2. Ճանաչել Արմեն Մարտունի Աղաջանյանի սեփականության իրավունքը Վանաձոր համայնքի գյուղ Գուգարքում գտնվող բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ 2338.9քմ հողամասի վրա գտնվող բնակելի նշանակության բոլոր շինությունների նկատմամբ:
3. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:
4. Սույն որոշման 1-ին կետում նշված գույքին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր գյուղ Գուգարք, 14-րդ փողոց, 40/1 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2022թ. նոյեմբերի 09
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

09 նոյեմբերի 2022 թվականի N 772

## ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՄԻՉՈՒՐԻՆԻ ՓՈՂՈՑ ԹԻՎ 25 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՆԱՀԻՏ ԱՐՏԱՎԱԶԴԻ ԱՓԻՆՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Անահիտ Արտավազդի Ափինյանի (ծնված՝ 28.05.1955թ.) դիմումը, 19.10.2021թ. տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի (նոտարական ակտի կոդ: 741-20211015-84-5456707) թիվ 3256 վկայագիրը, «Լոռու մարզ» նոտարական տարածքի նոտար Թագուհի Մարտիրոսյանի կողմից տրված «Անահիտ Արտավազդի Ափինյանի կողմից փաստացի տիրապետելու եղանակով Արտավազդ Զաքարի Ափինյանի ժառանգական գույքը ընդունելու իրավաբանական նշանակություն ունեցող փաստը հաստատելու մասին» թիվ 3255 նոտարական ակտը, ՀՀ կադաստրի կոմիտեի 02.06.2022թ. հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր: 2022WV5DZW), 08.07.1986թ. տրված անհատական բնակելի տան տեխնիկական անձնագիրը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից 09.08.2022թ. տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ ՎՆ 1-94/22 Ի եզրակացությունը, «ԻՆԷՔՍ» ՍՊԸ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, շինությունների բնութագիրը և հաշվի առնելով այն, որ Վանաձոր քաղաքի Միչուրինի փողոց, թիվ 25 հասցեում գտնվող բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 510.0քմ և կից 39.9քմ մակերեսներով հողամասերը և դրանց վրա կառուցված բնակելի նշանակության շինությունները չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ: Հողամասի ընդհանուր մակերեսը կազմում է 549.9քմ: Անհատական բնակելի տունը կառուցվել է 1970-1990թթ.-ին: Ղեկավարվելով 10.06.2008թ. «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ ***որոշում եմ.***

1. Ճանաչել Անահիտ Արտավազդի Ափինյանի սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Միչուրինի փողոց, թիվ 25 հասցեում գտնվող բնակելի տան կառուցման և

սպասարկման համար անհրաժեշտ օրինական 510.0քմ մակերեսով հողամասին կից 39.9քմ մակերեսով հողամասի նկատմամբ:

2. Ճանաչել Անահիտ Արտավազդի Ափինյանի սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Միչուրինի փողոց, թիվ 25 հասցեում գտնվող 549.9քմ մակերեսով հողամասի վրա գտնվող բնակելի նշանակության բոլոր շինությունների նկատմամբ:

3. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հողամասի հատակագծով:

4. Վանաձոր քաղաքի Միչուրինի փողոց, թիվ 25 հասցեում գտնվող բնակելի տանը տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր, ք. Վանաձոր, Ի. Միչուրինի փողոց, թիվ 25 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2022թ. նոյեմբերի 09
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

09 նոյեմբերի 2022 թվականի N 773

### ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԴՊՐՈՑԻ ՓՈՂՈՑ ԹԻՎ 46-2 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ԳԱԳԻԿ ՍԵՅՐԱՆԻ ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺՆԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Գագիկ Սեյրանի Քալանթարյանի դիմումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 21062018-06-0093 վկայականը, ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից 08.02.2022թ. տրված հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր: 20228LO8L5), ԳԱՍՊԱՐ ՎԵՔԻԼՅԱՆ ԱՁ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագիծը, շինությունների բնութագիրը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ կետերով, 13-րդ կետով, ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ ***որոշում եմ.***

1. Ճանաչել օրինական Վանաձոր քաղաքի Դպրոցի փողոց թիվ 46-2 հասցեում գտնվող, Գագիկ Սեյրանի Քալանթարյանին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող հողամասում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը չխախտող, քաղաքացիների կյանքին ու առողջությանը վտանգ չսպառնացող, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներից դուրս, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների իրականացված և հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք չառաջացնող ինքնակամ կառուցված 69,64քմ ընդհանուր արտաքին մակերեսով բնակելի նշանակության շինությունները (ներքին մակերեսը՝ 69,24քմ, որից 10,66քմ ավտոտնակ, 58,58քմ ծածկ)՝ համաձայն համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծի:
2. Գագիկ Սեյրանի Քալանթարյանի կողմից օրինականացման համար սահմանված վճարը՝ 69,64քմ ընդհանուր արտաքին մակերեսով բնակելի նշանակության շինությունների համար՝ 223270 (երկու հարյուր քսաներեք հազար երկու հարյուր յոթանասուն) դրամ գումարը 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում սույն որոշումը կհամարվի ուժը կորցրած:
3. Սույն որոշման 1-ին կետում նշված գույքի տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր Վանաձոր քաղաք, Դպրոցի փողոց, 46/2 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ԱՐԿԱԴԻ ՓԵԼԵՇՅԱՆ

2022թ. նոյեմբերի 09
ք.Վանաձոր

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

09 նոյեմբերի 2022 թվականի N 774

### ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 01 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 737 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Դաշինք հանուն կայուն և կանաչ կառավարման» ծրագրի ղեկավարի 08 նոյեմբերի 2022 թվականի զեկուցագիրը, Վանաձոր համայնքի ղեկավարի 01 նոյեմբերի 2022 թվականի թիվ 737 որոշումը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով, ***որոշում եմ.***

Վանաձոր համայնքի ղեկավարի 01 նոյեմբերի 2022 թվականի «Տաթև Սողոմոնի Քեշիշյանին աշխատանքի ընդունելու մասին» թիվ 737 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը.

1.Որոշման նախաբանը «ղեկավարվելով» բառից հետո լրացնել «ՀՀ աշխատանքային օրենսգրքի 91-րդ հոդվածի 1-ին մասով, 92-րդ հոդվածով և 94-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով» բառերով:

2.Որոշման 1-ին կետում «10 ամիս» բառերը փոխարինել «18 ամիս» բառերով:

3.Որոշման 2-րդ կետում «Աշխատավարձը՝ համաձայն աշխատանքային պայմանագրի:» բառերը փոխարինել «Սահմանել երեք ամիս փորձաշրջան:» բառերով:

4. Որոշման 2-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 3-րդ կետով.

«3. Աշխատավարձը՝ համաձայն աշխատանքային պայմանագրի:»:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2022թ. նոյեմբերի 09
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

11 նոյեմբերի 2022 թվականի N 775

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՅՈՒՂ ԳՈՒԳԱՐՔ ՉԵԽԱԿԱՆ ՏՆԱԿ ԹԻՎ 2 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆԻՆ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վիգեն Յուրիկի Գրիգորյանի 29.09.2022 թվականի թիվ 12040 դիմումը,անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի պետական գրանցման թիվ 1743251 վկայական, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր համայնքի գյուղ Գուգարք,Չեխական տնակ, թիվ 2 հասցեում գտնվող բնակարանին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր գյուղ Գուգարք, 6-րդ փողոց, 72 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2022թ. նոյեմբերի 11
ք.Վանաձոր

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 նոյեմբերի 2022 թվականի N 776

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՉԱՊԱԵՎԻ ՓՈՂՈՑ 3 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Անուշ Ավագյանի 02.11.2022 թվականի թիվ 14376 դիմումը, անշարժ գույքի սեփականության իրավունքների պետական գրանցման թիվ 02032021-06-0028 վկայականը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր քաղաքի Չապաևի փողոց 3 հասցեում գտնվող բնակելի տանը տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր Վանաձոր ք.,Մոնթե Մելքոնյան փողոց, 3 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2022թ. նոյեմբերի 11
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

11 նոյեմբերի 2022 թվականի N 777

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ Շ/Կ ԳՈՒԳԱՐՔ 10-ՐԴ ՓՈՂՈՑ, ԹԻՎ 24 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ, ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԼՈՒՍԻԿ ՍԵՆԻԿԻ ՄԱԼԱՔՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ,ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՎԱՆԱՁՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 06 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 584,ԳՈՒԳԱՐՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 23 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 258Ա ԵՎ ԳՈՒԳԱՐՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 23 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 259Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Լուսիկ Սենիկի Մալաքյանի (ծնված՝ 10.12.1937թ.) դիմումը, 21.08.1986թ. տրված տեխնիկական անձնագիրը, 11.01.2022թ. տրված սեփականության իրավունքի թիվ 99 (նոտարական ակտի կոդ: 594-20220110-105-5630256) և ըստ օրենքի ժառանգության իրավունքի թիվ 100 (նոտարական ակտի կոդ: 594-20211227-84-5613403) վկայագրերը, Լոռու մարզի Գուգարք համայնքի հողային բարեփոխումների և սեփականաշնորհման հանձնաժողովի 21.11.1991թ. թիվ 11 որոշման քաղվածքը, «Լոռու մարզի Գուգարք համայնքի տնամերձ և սեփականաշնորհված հողերի վերաբերյալ» մատյանի թիվ 7 էջի պատճենը, ՀՀ կադաստրի կոմիտեի գույքի նկատմամբ իրավունքի (սահմանափակման) պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին 20.01.2022 թվականի թիվ Կ-20012022-06-0094 որոշումը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, ԱՐՍԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆ ՌՈՒԴԻԿԻ ԱՁ-ի կողմից տրված հողամասի, շինությունների հատակագիծը, շինությունների բնութագիրը և հաշվի առնելով այն, որ Վանաձոր համայնքի Շ/Կ Գուգարք 10-րդ փողոց, թիվ 24 հասցեում գտնվող բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական ճշտված սահմաններով 2292.9քմ հողամասը, դրանց վրա կառուցված բնակելի նշանակության շինությունները չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ: Անհատական բնակելի տունը կառուցվել է 1970-2005թթ.-ին, բնակելի տան զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ հողամասի մակերեսը փաստացի կազմում է 2292.9քմ: Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 59-րդ հոդվածով, 10.06.2008թ. «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով, ՀՀ կառավարության 29.04.2021թ.

թիվ 698 որոշումով,ՀՀ կառավարության 2021թ. փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշման 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ ***որոշում եմ.***

1. Ճանաչել Լուսիկ Սենիկի Մալաքյանի սեփականության իրավունքը Վանաձոր համայնքի Շ/Կ Գուգարք 10-րդ փողոց, թիվ 24 հասցեում գտնվող բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական ճշտված սահմաններով 2292.9քմ մակերեսով հողամասի նկատմամբ:

2. Ճանաչել Լուսիկ Սենիկի Մալաքյանի սեփականության իրավունքը Վանաձոր համայնքի Շ/Կ Գուգարք 10-րդ փողոց, թիվ 24 հասցեում գտնվող բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ 2292.9քմ հողամասի վրա գտնվող բնակելի նշանակության բոլոր շինությունների նկատմամբ, բացառությամբ 15 մայիսի 2001թ-ից հետո կառուցված 2.71քմ մակերեսով զուգարանի:

3. Հողամասի ճշտված սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով և Լոռու մարզի Գուգարք համայնքի հողային բարեփոխումների և սեփականաշնորհման հանձնաժողովի 21.11.1991թ. թիվ 11 որոշման քաղվածքով սահմանված մակերեսով:

4. Սույն որոշման 1-ին կետում նշված գույքին տրամադրել փոստային հասցե՝ Վանաձոր գյուղ Գուգարք, 10-րդ փողոց, 24 բնակելի տուն:

5. Ուժը կորցրած ճանաչել Վանաձորի համայնքի ղեկավարի 06 հոկտեմբերի 2022 թվականի «Վանաձոր համայնքի Շ/Կ Գուգարք 10-րդ փողոց թիվ 24 հասցեում գտնվող բնակելի տանը նոր փոստային հասցե տրամադրելու մասին» թիվ 584 որոշումը:

6. Ուժը կորցրած ճանաչել Գուգարք համայնքի ղեկավարի 23 դեկտեմբերի 2022 թվականի «ՀՀ Լոռու մարզի Գուգարքի կադաստրային քարտեզի 06-031-0067-0006 ծածկագրի ըստ օրենքի ժառանգության իրավունքի 100 վկայագրի՝ Լուսիկ Սենիկի Մալաքյանի ընտանիքին պատկանող բնակելի տան փոստային հասցեն հաստատելու մասին.» թիվ 258Ա որոշումը:

7. Ուժը կորցրած ճանաչել Գուգարք համայնքի ղեկավարի 23 դեկտեմբերի 2022 թվականի «06-031-0067-0006 ծածկագրի տակ գտնվող բնակելի տան,օժանդակ կառույցների եվ հողամասի նկատմամբ իրավունքները ճանաչելու մասին.» թիվ 259Ա որոշումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2022թ. նոյեմբերի 11
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 նոյեմբերի 2022 թվականի N 778

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՏԱՎՐՈՍ 17 ՓՈՂ ԹԻՎ 2Ա ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՏՆՏ. ԿԱՌՈՒՅՑԻՆ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արտաշես Սերգեյի Խաչատրյանի 23.08.2022 թվականի թիվ 9918 դիմումը, անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1947907 վկայականը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր քաղաքի Տավրոս 17 փող թիվ 2ա հասցեում գտնվող տնտ. կառույցին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր Վանաձոր ք., Տավրոս թաղամասի 17-րդ փողոց, 2/1 տնտեսական շինություն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2022թ. նոյեմբերի 11
ք.Վանաձոր

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 նոյեմբերի 2022 թվականի N 779

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 06 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 477 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Սվետլանա Ալավերդու Ղազարյանի դիմումը, Վանաձոր համայնքի ղեկավարի 06 սեպտեմբերի 2022 թվականի թիվ 477 որոշումը, ՀՀ կադաստրի կոմիտեի գույքի նկատմամբ իրավունքի (սահմանափակման) պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին 06.10.2022 թվականի թիվ Կ-06102022-06-0061 որոշումը, ԱՐՍԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆ ՌՈՒԴԻԿԻ ԱՁ-ի կողմից տրված հողամասի և շինությունների նոր հատակագիծը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր համայնքի ղեկավարի 06 սեպտեմբերի 2022 թվականի «Վանաձոր քաղաքի Տպագրիչների փողոց նրբանցք թիվ 4 հասցեում գտնվող բնակելի տանը կից հողամասի և շինություինների նկատմամբ Սվետլանա Ալավերդու Ղազարյանի սեփականության իրավունքը ճանաչելու և նոր փոստային հասցե տրամադրելու մասին» թիվ 477 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1. Որոշման նախաբանում «42.29քմ» բառերը փոխարինել «2.8քմ» բառերով և «625.29քմ» բառերը փոխարինել «585.80քմ» բառերով:

2. Որոշման 1-ին կետում «42.29քմ» բառերը փոխարինել «2.8քմ» բառերով:

3. Որոշման 2-րդ կետում «625.29քմ» բառերը փոխարինել «585.80քմ» բառերով:

3. Վանաձոր համայնքի ղեկավարի 06 սեպտեմբերի 2022 թվականի թիվ 477 որոշման հատակագիծը փոխարինել Վանաձոր համայնքի ղեկավարի կողմից հաստատված նոր հատակագծով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2022թ. նոյեմբերի 14
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 նոյեմբերի 2022 թվականի N 780

## ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՇԻՆԱՐԱՐՆԵՐԻ ՓՈՂՈՑ 5/2 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉՎԱԾ ՄԵՏԱՂԱԿԱՆ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ԷՄՄԱ ԽԵՉՈՒՄՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Էմմա Խեչումյանի 21.06.2022 թ. թիվ 6129 դիմումը, Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 09112022-06-0016 վկայականը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 34.2-րդ կետով և 35-րդ կետի դ) և ե) ենթակետերով՝ ***որոշում եմ.***

1. Վանաձոր քաղաքի Շինարարների փողոց 5/2 հասցեում գտնվող, Վանաձոր համայնքի սեփականությունը ճանաչված 23.87քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 22.38քմ) մետաղական ավտոտնակը 47000 (քառասունյոթ հազար) դրամով և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 29.6քմ մակերեսով հողամասը 131480 (հարյուր երեսունմեկ հազար չորս հարյուր ութսուն) դրամով, ուղղակի վաճառքի ձևով օտարել Էմմա Խեչումյանին:

2. Վանաձորի համայնքի ղեկավարին՝ Էմմա Խեչումյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել ավտոտնակի և հողամասի առուվաճառքի պայմանագիր, իսկ համայնքի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին հաշվառել վերոնշյալ պայմանագիրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2022թ. նոյեմբերի 14
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 նոյեմբերի 2022 թվականի N 781

### ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՁԵՐԺԻՆՍԿՈՒ ՓՈՂՈՑ ԹԻՎ 29 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ԴՐԱ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԳԱՌՆԻԿ ՇԱՔԱՐԻ ՀՈՎԱՍԱՓՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Գառնիկ Շաքարի Հովասափյանի դիմումը, 04.06.1997թ. տրված անհատական բնակելի տան գույքային թերթը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից 02.11.2022թ. տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ ՎՆ1-196/22 Ի եզրակացությունը, ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից 22.10.2022թ. տրված հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր: 2022FYYUAD), ԳԱՍՊԱՐ ՎԵՔԻԼՅԱՆ ԱՁ-ի կողմից տրված հողամասի, շինությունների հատակագիծը, շինությունների բնութագիրը և հաշվի առնելով այն, որ Վանաձոր քաղաքի Ձերժինսկու փողոց թիվ 29 հասցեում կառուցած բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 103.4քմ մակերեսով հողամասը, դրա վրա կառուցված բնակելի նշանակության շինությունները չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ: Անհատական բնակելի տունը կառուցվել է 1990-1998թթ.-ին, բնակելի տան զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ հողամասի մակերեսը փաստացի կազմում է 103.4քմ:Ղեկավարվելով 10.06.2008թ. «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2021թ. փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ ***որոշում եմ.***

1. Ճանաչել Գառնիկ Շաքարի Հովասափյանի սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Ձերժինսկու փողոց թիվ 29 հասցեի բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 103.4քմ մակերեսով հողամասի նկատմամբ:
2. Ճանաչել Գառնիկ Շաքարի Հովասափյանի սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Ձերժինսկու փողոց թիվ 29 հասցեի բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ 103.4քմ մակերեսով հողամասի վրա գտնվող բնակելի նշանակության բոլոր շինությունների նկատմամբ:
3. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:
4. Սույն որոշման 1-ին կետում նշված գույքին տրամադրել նոր փոստային հասցե՝ ք.Վանաձոր Վանաձոր ք., Ծովակալ Իսակովի փողոց, 29/1 բնակելի տուն:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ** **Ա. ՓԵԼԵՇՅԱՆ**

2022թ. նոյեմբերի 14
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 նոյեմբերի 2022 թվականի N 782

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՇԻՆԱՐԱՐՆԵՐԻ ՓՈՂՈՑ ԹԻՎ 27/1-6 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ԳԱԳԻԿ ԱՆՈՒՇԱՎԱՆԻ ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԻՆՔՆԱԿԱՄ ՁԵՎԱՓՈԽՈՒՄՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Գագիկ Անուշավանի Շահնազարյանի դիմումը, 06.12.1997թ. թիվ Ա003043 սեփականության վկայագիրը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, «ԻՆԷՔՍ» ՍՊԸ-ի կողմից տրված շինությունների հատակագիծը, 11.10.2022թ. ՀՀ կադաստրի կոմիտեի հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր՝ 2022SFBSXQ), ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 26-րդ, 27-րդ, 31-րդ կետերով և 32-րդ կետի բ) ենթակետով, ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ ***որոշում եմ.***

1. Ճանաչել օրինական Գագիկ Անուշավանի Շահնազարյանին սեփականության իրավունքով պատկանող, այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը չխախտող, քաղաքացիների կյանքին ու առողջությանը վտանգ չսպառնացող, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների իրականացված և հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք չառաջացնող, Վանաձոր համայնքի Շինարարների փողոց թիվ 27/1-6 հասցեում գտնվող բնակարանում իրականացված թվով 2 ինքնակամ ձևափոխումները:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված թվով 2 ինքնակամ ձևափոխումների օրինականացման համար սահմանված վճարը՝ 3940 (երեք հազար ինը հարյուր քառասուն) դրամ գումարը 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում սույն որոշումը կհամարվի ուժը կորցրած:

3. Վանաձոր համայնքի Շինարարների փողոց թիվ 27/1-6 բնակարանին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր Վանաձոր ք., Շինարարների փողոց, 27/1 շենք, 6 բնակարան:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2022թ. նոյեմբերի 14
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 նոյեմբերի 2022 թվականի N 783

### ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԱԲՈՎՅԱՆ ՓՈՂՈՑ 40 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՃՇՏՎԱԾ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վահրամ Ռոբերտի Կիրակոսյանի լիազորված անձ Հասմիկ Սամվելի Աղվանյանի 26.10.2022 թվականի թիվ 13903 դիմումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 01102021-06-0040 վկայականը, «ԳՈՒԳԱՐԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍՊԸ-ի կողմից տրված հողամասի հատակագիծը, իրավիճակային հատակագիծը, մասնագիտական եզրակացությունը, 27. 06.2022 թվականաի թիվ 50 ԱԲ 6952727 լիազորագրի ռուսերենից հայերեն թիվ 5461 թարգմանությունը (նոտարական ակտի կոդ: 763-20220907-64-6244590), ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 59-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 29.04.2021թ. թիվ 698 որոշումով, ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ ***որոշում եմ.***

1. Հաստատել Վանաձոր քաղաքի Աբովյան փողոց 40 հասցեում գտնվող բնակելի տան զբաղեցրած 0.04058 հա մակերեսով հողամասի ճշտված սահմանները՝ համաձայն համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծի:

2. Վանաձոր քաղաքի Աբովյան փողոց 40 հասցեում գտնվող բնակելի տանը տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր Վանաձոր ք., Ս. Աբովյան փողոց, 40/1 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2022թ. նոյեմբերի 14
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 նոյեմբերի 2022 թվականի N 784

### ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԵՐԵՎԱՆՅԱՆ ԽՃՈՒՂԻ 70 ՇԵՆՔ, 2 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ալլա Հրաչիկի Ղազարյանի 08.09.2022 թվականի թիվ 10823 դիմումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 20052022-06-0016 վկայականը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2002 թվականի փետրվարի 2-ի թիվ 88 որոշումով, ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ ***որոշում եմ.***

1. Վանաձոր քաղաքի Երևանյան խճուղի 70 շենք, 2 հասցեում գտնվող բնակարանի օգտագործման նպատակը փոխել բնակարանից՝ ատամնաբուժարանի:

3. Սույն որոշման 1-ին կետում նշված գույքին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր Վանաձոր ք., Երևանյան խճուղի 70/3 ատամնաբուժարան:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2022թ. նոյեմբերի 14
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 նոյեմբերի 2022 թվականի N 785

### ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ Ս. ՉԱՐՅԱՆ ՓՈՂՈՑ 79/60 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԳԵՎՈՐԳ ՍԱՐԳՍԻ ԵՂԻԱԶԱՐՅԱՆԻՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Գևորգ Սարգսի Եղիազարյանի 25.05.2022 թվականի թիվ 4519 դիմումը, Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 24102022-06-0031 վկայականը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 34.2-րդ կետով, 35-րդ կետի գ) ենթակետով և 36-րդ կետով՝ ***որոշում եմ.***

1. Վանաձոր քաղաքի Ս. Չարյան փողոց 79/60 հասցեում գտնվող, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող, Վանաձոր համայնքի սեփականությունը ճանաչված 24.07քմ (ներքին մակերեսը՝ 22.86քմ) մակերեսով ավտոտնակը և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ 24.07քմ մակերեսով հողամասը վարձակալության իրավունքով, 10 տարի ժամկետով, տրամադրել Գևորգ Եղիազարյանին:

2. Վանաձորի համայնքի ղեկավարին՝ Գևորգ Եղիազարյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել ավտոտնակի և հողամասի վարձակալության իրավունքի տրամադրման պայմանագիր, իսկ համայնքի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին հաշվառել վերոնշյալ պայմանագիրը: Ավտոտնակի 1.0քմ-ի համար ամսական 30 (երեսուն) ՀՀ դրամ վարձավճարով և հողամասի՝ 1.0քմ-ի համար ամսական 24 (քսանչորս) ՀՀ դրամ վարձավճարով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2022թ. նոյեմբերի 14
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 նոյեմբերի 2022 թվականի N 786

## ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԻՍԱՀԱԿՅԱՆ ՓՈՂՈՑ, 1-ԻՆ ՆՐԲԱՆՑՔ ԹԻՎ 11 ՇԵՆՔԻ ՀԱՐԱՎԱՅԻՆ ՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԻ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ԱՎՏՈՏՆԱԿԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վահե Միշայի Մարգարյանի 14.09.2022թ. թիվ 11106 դիմումը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, ԳԱՍՊԱՐ ՎԵՔԻԼՅԱՆ ԱՁ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, շինությունների բնութագիրը, ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից 14.09.2022 թվականին տրված հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը (ծածկագիր: 2022BWADFC), ղեկավարվելով 16 դեկտեմբերի 2021 թվականի «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» թիվ 397-Ն ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետով,ՀՀ կառավարության 2021թ. փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով՝ ***որոշում եմ.***

1. Ճանաչել Վանաձոր համայնքի սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Իսահակյան փողոց, 1-ին նրբանցք, թիվ 11 շենքի հարավային մասում ինքնակամ կառուցված, 16 դեկտեմբերի 2021 թվականի «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» թիվ 397-Ն ՀՀ օրենքով սահմանված օրինականացման պայմաններին համապատասխանող 26.8քմ արտաքին (ներքին՝ 22.38) մակերեսով ավտոտնակի և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 26.8քմ մակերեսով հողամասի նկատմամբ՝ համաձայն հատակագծի:
2. Ճանաչել օրինական սույն որոշման 1-ին կետում նշված բնակելի գործառնական նշանակությամբ ինքնակամ կառույցը:
3. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ 5-օրյա ժամկետում դիմել ՀՀ կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանում՝ սույն որոշման 1-ին կետում նշված ինքնակամ կառուցված ավտոտնակի և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ

հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար:

4. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետ-գլխավոր ճարտարապետ Ս. Աբովյանին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գույքի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի գրանցումից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր առաջարկել սույն որոշման 1-ին կետում նշված շինության ինքնակամ կառուցումը իրականացրած անձին ավտոտնակը և հողամասը ուղղակի վաճառքի ձևով օտարելու վերաբերյալ:

5. Վանաձոր քաղաքի Իսահակյան փողոց, 1-ին նրբանցք, թիվ 11 շենքի հարավային մասում գտնվող ավտոտնակին տրամադրել փոստային հասցե՝ Վանաձոր Վանաձոր ք., Ա. Իսահակյան փողոց, 1-ին նրբանցք, 11/11 ավտոտնակ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2022թ. նոյեմբերի 14
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 նոյեմբերի 2022 թվականի N 787

## ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 23 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 2383 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Քնարիկ Ավագի Գուլինյանի, Գագիկ Ավետիքի Բաղդասարյանի և Գայանե Ավետիքի Բաղդասարյանի դիմումը, Վանաձոր համայնքի ղեկավարի 23 նոյեմբերի 2021 թվականի թիվ 2383 որոշումը, ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշումը ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր համայնքի ղեկավարի 23 նոյեմբերի 2021 թվականի «Վանաձոր քաղաքի Զ. Անդրանիկի փող. թիվ 75 հասցեում գտնվող Քնարիկ Ավագի Գուլինյանին, Գագիկ Ավետիքի Բաղդասարյանին և Գայանե Ավետիքի Բաղդասարյանին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող բնակելի տունը որպես երկու առանձին գույքային միավորներ տարանջատելու և փոստային հասցեներ տրամադրելու մասին» թիվ 2383 որոշման մեջ կատարել հետևյալ լրացումը.

1. Որոշումը լրացնել հետևյալ նոր 3-րդ կետով.

«3. 604.0քմ մակերեսով հողամասը թողնել որպես ընդհանուր օգտագործման հողամաս երկու տնատիրությունների միջև:»:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ԱՐԿԱԴԻ ՓԵԼԵՇՅԱՆ

2022թ. նոյեմբերի 14
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 նոյեմբերի 2022 թվականի N 788

## ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ Ս. ԼԱԶՅԱՆ ՓՈՂՈՑ 45/12 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՐՄԵՆ ԶՈՒԼՈՅԱՆԻՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արմեն Ռուդիկի Զուլոյանի 18.06.2021 թվականի թիվ 8731 դիմումը, Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 07112022-06-0044 վկայականը, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 481-րդ հոդվածով և 76-րդ հոդվածի 2-րդ մասով, ՀՀ կառավարության 12.04.2001թ. թիվ 286 որոշմամբ հաստատված կարգի 46.2-րդ կետի ա) ենթակետով՝ ***որոշում եմ.***

1. Վանաձոր քաղաքի Ս. Լազյան փողոց 45/12 հասցեում գտնվող, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին դասվող համայնքային սեփականություն հանդիսացող 19.8քմ մակերեսով հողամասը, համաձայն Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 07112022-06-0044 վկայականի, կառուցապատման իրավունքով, 10 տարի ժամկետով տրամադրել Արմեն Զուլոյանին՝ ավտոտնակ կառուցելու նպատակով:

2. Վանաձորի համայնքի ղեկավարին՝ Արմեն Զուլոյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել ավտոտնակի և հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման պայմանագիր, 1.0քմ մակերեսով հողամասի համար ամսական վճարը սահմանելով 24 (քսանչորս) ՀՀ դրամ, իսկ համայնքի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին հաշվառել վերոնշյալ պայմանագիրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2022թ. նոյեմբերի 15
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 նոյեմբերի 2022 թվականի N 789

## ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 20 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 533 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Կառլեն Գարեգինի Ղուկասյանի դիմումը, Վանաձոր համայնքի ղեկավարի 20 սեպտեմբերի 2022 թվականի թիվ 533 որոշումը, ՀՀ կադաստրի կոմիտեի գույքի նկատմամբ իրավունքի (սահմանափակման) պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին 07.10.2022 թվականի թիվ Կ-07102022-06-0092 որոշումը, «Մար-Մոս» ՍՊԸ-ի կողմից տրված հողամասի նոր հատակագիծը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր համայնքի ղեկավարի 20 սեպտեմբերի 2022 թվականի «Վանաձոր քաղաքի Լալվարի փողոց թիվ 24 հասցեի բնակելի տան ու հողամասի նկատմամբ Կառլեն Գարեգինի Ղուկասյանի սեփականության իրավունքը ճանաչելու և նոր փոստային հասցե տրամադրելու մասին» թիվ 533 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1. Որոշման նախաբանում «ընդհանուր օգտագործման հողամաս» բառերը փոխարինել «ընդհանուր համատեղ սեփականություն» բառերով:

2. Որոշման 1-ին կետում «նկատմամբ:» բառից հետո լրացնել «Հողամասի ընդհանուր մակերեսը կազմում է 444,2քմ, որից 51,6քմ մակերեսով հողամասը հանդիսանում է ընդհանուր համատեղ սեփականություն երկու տնատիրությունների միջև: Կառլեն Գարեգինի Ղուկասյանի բաժնեմասը կազմում է 418,4քմ (444,2-51.6:2):» բառերով:

3. Վանաձոր համայնքի ղեկավարի 20 սեպտեմբերի 2022 թվականի թիվ 533 որոշման հատակագիծը փոխարինել Վանաձոր համայնքի ղեկավարի կողմից հաստատված նոր հատակագծով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2022թ. նոյեմբերի 15
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 նոյեմբերի 2022 թվականի N 790

### ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԱԲՈՎՅԱՆ ՓՈՂ ԹԻՎ 1Զ ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԽԱՆՈՒԹԻՆ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Մատինյանի Նշխար» ՍՊԸ-ի տնօրեն Նահապետ Հրաչիկի Մխիթարյանի դիմումը, անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1930075 վկայականը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր քաղաքի Աբովյան փող թիվ 1զ հասցեում գտնվող խանութին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր Վանաձոր ք., Ս. Աբովյան փողոց, 1/65 խանութ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2022թ. նոյեմբերի 15
ք.Վանաձոր

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 նոյեմբերի 2022 թվականի N 791

### ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 21 ՄԱՅԻՍԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 96 ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արամայիս Արշակի Բաբայանի դիմումը, Վանաձոր համայնքի ղեկավարի 21 մայիսի 2021 թվականի թիվ 96 շինարարության թույլտվությունը և ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր համայնքի ղեկավարի 21 մայիսի 2021 թվականի թիվ 96 շինարարության թույլտվության մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝ «2-րդ կատեգորիա» բառը փոխարինել «3-րդ կատեգորիա» բառով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2022թ. նոյեմբերի 15
ք.Վանաձոր

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 նոյեմբերի 2022 թվականի N 792

### ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԽՆՁՈՐՈՒՏ ԹԱՂԱՄԱՍ 2-ՐԴ ՓՈՂՈՑ 1-ԻՆ ՓԱԿՈՒՂԻ ԹԻՎ 11 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿՈՐՅՈՒՆ ՋԱՐՄԱՅԻԼԻ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Կորյուն Ջարմայիլի Սարգսյանի լիազորված անձ՝ Գալինա Վալոդյայի Անդրեասյանի դիմումը, 07.02.2022թ. տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի թիվ 491 (նոտարական ակտի կոդ: 763-20220206-84-5682613) և թիվ 489 (նոտարական ակտի կոդ: 763-20220206-84-5682609) վկայագրերը, 12.04.2022թ. թիվ 1827 (նոտարական ակտի կոդ: 594-20220412-90-5822607) լիազորագիրը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, 22.11.1986թ. տրված անհատական բնակելի տան տեխնիկական անձնագիրը, «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից 26.07.2022թ. տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ ՎՆ 1-84/22 Ի եզրակացությունը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, «ԳԱՍՊԱՐ ՎԵՔԻԼՅԱՆ» ԱՁ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագիծը, շինությունների բնութագիրը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները և հաշվի առնելով այն, որ Վանաձոր քաղաքի Խնձորուտ 2-րդ փողոց 1-ին փակուղի թիվ 11 հասցեի բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 908.0քմ և դրան կից 249.4քմ մակերեսներով հողամասերը, դրանց վրա կառուցված բնակելի նշանակության շինությունները չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ: Բնակելի տունը կառուցվել է 1962-1990թթ-ին, դրա զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ հողամասի մակերեսը փաստացի կազմում է 1157.4քմ: Ղեկավարվելով 10.06.2008թ. «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ ***որոշում եմ.***

1. Ճանաչել Կորյուն Ջարմայիլի Սարգսյանի սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Խնձորուտ 2-րդ փողոց 1-ին փակուղի թիվ 11 հասցեի բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 908.0քմ մակերեսով հողամասին կից 249.4քմ մակերեսով հողամասի նկատմամբ :

2. Ճանաչել Կորյուն Չարմայիլի Սարգսյանի սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Խնձորուտ 2-րդ փողոց 1-ին փակուղի թիվ 11 հասցեի 1157.4քմ մակերեսով հողամասի վրա գտնվող բնակելի նշանակության բոլոր շինությունների նկատմամբ:

3. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:

4. Վանաձոր քաղաքի Խնձորուտ 2-րդ փողոց 1-ին փակուղի թիվ 11 հասցեում գտնվող գույքին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր, Վանաձոր ք., Խնձորուտ թաղամասի 1-ին փողոց, 2-րդ նրբանցք, թիվ 11/1 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2022թ. նոյեմբերի 15
ք.Վանաձոր

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 նոյեմբերի 2022 թվականի N 793

### ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՅՈՒՂ ԳՈՒԳԱՐՔ 13 ՓՈՂ ԹԻՎ 18 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԿԻՍԱԿԱՌՈՒՅՑԻՆ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Էդուարդ Սմբատի ՈՒրումյանի 21.10.2022 թվականի թիվ 13628 դիմումը, անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի պետական գրանցման թիվ 1848603 վկայական, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր համայնքի գյուղ Գուգարք,13 փող թիվ 18 հասցեում գտնվող կիսակառույցին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր գյուղ Գուգարք,2-րդ փողոց, 3-րդ նրբանցք, 6 կիսակառույց:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2022թ. նոյեմբերի 15
ք.Վանաձոր

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 նոյեմբերի 2022 թվականի N 794

ՀՐԱՉԻԿ ՀՐԱՅՐԻ ՂԱՄԲԱՐՅԱՆԻՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՕԳՆԱԿԱՆԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հրաչիկ Հրայրի Ղամբարյանի դիմումը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 57-րդ հոդվածի 10-րդ մասով՝ ***որոշում եմ.***

1. Հրաչիկ Հրայրի Ղամբարյանին նշանակել Վանաձոր համայնքի ղեկավարի օգնականի պաշտոնում:

2. Հրաչիկ Ղամբարյանի լիազորությունների կատարման սկիզբ սահմանել 2022 թվականի նոյեմբերի 16-ը:

3. Աշխատավարձը՝ համաձայն հաստիքացուցակի:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2022թ. նոյեմբերի 15
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 նոյեմբերի 2022 թվականի N 795

### ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՏԱՐՈՆ-2 ՔՇՀ-3 ԹԱՂԱՄԱՍ ԹԻՎ 15-1/2-1 ՀԱՍՑԵԻՆ ԿԻՑ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով՝ ***որոշում եմ***.

Վանաձոր քաղաքի Տարոն-2 ՔՇՀ-3 թաղամաս թիվ 15-1/2-1 հասցեին կից գտնվող 0.00133հա մակերեսով հողամասին տրամադրել փոստային հասցե՝ Վանաձոր Վանաձոր ք., Տարոն-2 ՔՇՀ-3 թաղամաս, 15/18 հողամաս:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ԱՐԿԱԴԻ ՓԵԼԵՇՅԱՆ

2022թ. նոյեմբերի 16
ք.Վանաձոր

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 նոյեմբերի 2022 թվականի N 796

### ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 19-Ի <<ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ԹԻՎ 7 ՈՐՈՇՄԱՆ ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով հաստատված եռամսյակային բաշխումները և հաշվի առնելով գնումների պատասխանատու ստորաբաժանման կողմից ներկայացված գնման առարկաների բնութագրերի նախագիծը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Գնումների մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2017թ ապրիլի 13-ի «Գնումների պլանի ձևը, դրա լրացման, հաստատման և հրապարակման կարգը հաստատելու մասին» թիվ 390-Ն որոշմամբ հաստատված թիվ 3 հավելվածով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր համայնքի ղեկավարի 2022 թվականի մայիսի 19-ի <<Վանաձոր համայնքի 2022 թվականի գնումների պլանը հաստատելու մասին>> թիվ 7 որոշման հավելվածում կատարել լրացում՝ համաձայն հավելվածի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2022թ. նոյեմբերի 16
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 նոյեմբերի 2022 թվականի N 797

## ՎԱՆԱՁՈՐ ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՆԱԻՐԻ ՓՈՂՈՑԻ 10-1-1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ԴԱՎԻԹ ԳԵՎՈՐԳԻ ՊԱՌԱՎՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՕԲՅԵԿՏԻ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Դավիթ Գևորգի Պառավյանի լիազորված անձ՝ Լուսինե Արարատի Մոսինյանի դիմումը, 23.09.2022թ. թիվ 6046 (նոտարական ակտի կոդ: 594-20220923-90-6290517) լիազորագիրը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 03082022-06-0005 վկայականը, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 8-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի $14^3$-րդ հոդվածի 11, 12, 13, 14 մասերով, ՀՀ կառավարության 2002թ. փետրվարի 02-ի թիվ 88 որոշումով՝ ***որոշում եմ.***

1. Փոխել Վանաձոր Վանաձոր քաղաքի Նաիրի փողոց թիվ 10-1-1 հասցեում գտնվող, Դավիթ Գևորգի Պառավյանին սեփականության իրավունքով պատկանող 0.04 հա մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը՝ բնակավայրերի հասարակական կառուցապատման հողերից՝ բնակելի կառուցապատման հողերի:

2. Փոխել Վանաձոր Վանաձոր քաղաքի Նաիրի փողոց թիվ 10-1-1 հասցեում գտնվող, Դավիթ Գևորգի Պառավյանին սեփականության իրավունքով պատկանող 240.01քմ մակերեսով հասարակական շինության գործառնական նշանակությունը՝ հասարակականից՝ որպես բնակելի գործառնական նշանակությամբ շինության՝ բնակելի տուն:

3. Շինությունների գործառնական նշանակության փոփոխության համար շինարարության թույլտվություն չի պահանջվում:

4. Վանաձոր քաղաքի Նաիրի փողոց, թիվ 10-1-1 հասցեում գտնվող գույքին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր Վանաձոր ք., Նաիրիի փողոց, թիվ 10/5 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2022թ. նոյեմբերի 16
ք. Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 նոյեմբերի 2022 թվականի N 798

## ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՎԵՐԱԾՆՆԴԻ ՓՈՂՈՑ ԹԻՎ 12/1 ՀԱՍՑԵԻ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՄԱՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ,ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՎԱՆԱՁՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 24 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 702 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 8-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և 43-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի $14^3$-րդ հոդվածի 11, 12, 13, 14 մասերով, ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով՝ ***որոշում եմ.***

1. Փոխել Վանաձոր քաղաքի Վերածննդի փողոց թիվ 12/1 հասցեի արևելյան մասում գտնվող 0.00255հա մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը՝ բնակավայրերի խառը կառուցապատման հողերից՝ բնակելի կառուցապատման հողերի:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված հողամասին տրամադրել փոստային հասցե՝ Վանաձոր Վանաձոր ք., Վերածննդի փողոց, 12/2 հողամաս:

3.Ուժը կորցրած ճանաչել Վանաձոր համայնքի ղեկավարի 24 հոկտեմբերի 2022 թվականի «Վանաձոր քաղաքի Վերածննդի փողոց թիվ 12/1 հասցեի արևելյան մասում գտնվող հողամասին փոստային հասցե տրամադրելու մասին» թիվ 702 որոշումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2022թ. նոյեմբերի 16
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 նոյեմբերի 2022 թվականի N 799

## ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 23 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 536 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Էմմա Սարգսի Աղաբաբյանի դիմումը, Վանաձոր համայնքի ղեկավարի 23 սեպտեմբերի 2022 թվականի թիվ 536 որոշումը, ՀՀ կադաստրի կոմիտեի գույքի նկատմամբ իրավունքի (սահմանափակման) պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին 04.10.2022 թվականի թիվ Կ-04102022-06-0140 որոշումը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր համայնքի ղեկավարի 23 սեպտեմբերի 2022 թվականի «Վանաձոր քաղաքի Զաքարյան փողոց թիվ 46 հասցեի բնակելի տան և շինությունների նկատմամբ Էմմա Սարգսի Աղաբաբյանի սեփականության իրավունքը ճանաչելու և նոր փոստային հասցե տրամադրելու մասին» թիվ 536 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1. Որոշման նախաբանում «ընդհանուր օգտագործման հողամաս» բառերը փոխարինել «ընդհանուր համատեղ սեփականություն» բառերով:

2. Որոշման 1-ին կետում «նկատմամբ:» բառից հետո լրացնել « Հողամասի ընդհանուր մակերեսը կազմում է 540,3քմ, որից 117,6քմ մակերեսով հողամասը հանդիսանում է ընդհանուր համատեղ սեփականություն Էմմա Աղաբաբյանի և Արթուր Առաքելյանի միջև հավասար բաժիններով: Էմմա Աղաբաբյանի բաժնեմասը կազմում է 481,5քմ (422,7+117,6:2):» բառերով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2022թ. նոյեմբերի 16
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 նոյեմբերի 2022 թվականի N 800

## ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 12 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 501 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արթուր Ժորայի Առաքելյանի դիմումը, Վանաձոր համայնքի ղեկավարի 12 սեպտեմբերի 2022 թվականի թիվ 501 որոշումը, ՀՀ կադաստրի կոմիտեի գույքի նկատմամբ իրավունքի (սահմանափակման) պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին 04.10.2022 թվականի թիվ Կ-04102022-06-0151 որոշումը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր համայնքի ղեկավարի 12 սեպտեմբերի 2022 թվականի «Վանաձոր քաղաքի Զաքարյան փողոց թիվ 46ա հասցեի բնակելի տանը կից հողամասի և դրա վրա գտնվող շինությունների նկատմամբ Արթուր Ժորայի Առաքելյանի սեփականության իրավունքը ճանաչելու և նոր փոստային հասցե տրամադրելու մասին» թիվ 501 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1. Որոշման նախաբանում «ընդհանուր օգտագործման հողամաս» բառերը փոխարինել «ընդհանուր համատեղ սեփականություն» բառերով:

2. Որոշման 1-ին կետում «նկատմամբ:» բառից հետո լրացնել « Հողամասի ընդհանուր մակերեսը կազմում է 901.4քմ, որից 117,6քմ մակերեսով հողամասը հանդիսանում է ընդհանուր համատեղ սեփականություն Արթուր Առաքելյանի և Էմմա Աղաբաբյանի միջև հավասար բաժիններով: Արթուր Առաքելյանի բաժնեմասը կազմում է 842,6քմ (783,8+117,6:2):» բառերով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2022թ. նոյեմբերի 16
ք.Վանաձոր

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 նոյեմբերի 2022 թվականի N 801

### ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԵՐԵՎԱՆՅԱՆ ԽՃՈՒՂԻ ԹԻՎ 121 ՇԵՆՔԻ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԻ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ԱՎՏՈՏՆԱԿՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ռուզաննա Արամի Դանիելյանի 14.07.2022թ. թիվ 7383 դիմումը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, ԱՐՍԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆ ՌՈՒԴԻԿԻ ԱՁ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, շինությունների բնութագիրը, 19.07.2022 թվականին ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից տրված հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման ըվյալների մուտքագրման ծածկագիր: 20227HKX8Y), ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետով, ՀՀ կառավարության 2021թ. փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով՝ ***որոշում եմ.***

1. Ճանաչել Վանաձոր համայնքի սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Երևանյան խճուղի թիվ 121 շենքի հյուսիսային մասում ինքնակամ կառուցված, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված օրինականացման պայմաններին համապատասխանող 23.45 քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 21.52 քմ) ավտոտնակի և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 23.45քմ մակերեսով հողամասի նկատմամբ՝ համաձայն հատակագծի:
2. Ճանաչել օրինական սույն որոշման 1-ին կետում նշված բնակելի գործառնական նշանակությամբ ինքնակամ կառույցը:
3. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ 5-օրյա ժամկետում դիմել ՀՀ կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանում՝ սույն որոշման 1-ին կետում նշված ինքնակամ կառուցված ավտոտնակի և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար:
4. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետ-գլխավոր ճարտարապետ Ս. Աբովյանին՝ սույն որոշման 1-ին

կետում նշված գույքի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի գրանցումից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր առաջարկել սույն որոշման 1-ին կետում նշված շինության ինքնակամ կառուցումը իրականացրած անձին ավտոտնակը և հողամասը ուղղակի վաճառքի ձևով օտարելու վերաբերյալ:

5. Վանաձոր քաղաքի Երևանյան խճուղի թիվ 121 շենքի հյուսիսային մասում գտնվող ավտոտնակին տրամադրել փոստային հասցե՝ Վանաձոր Վանաձոր ք., Երևանյան խճուղի, 121/9 ավտոտնակ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2022թ. նոյեմբերի 17
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

17 նոյեմբերի 2022 թվականի N 802

## ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԹԵՎՈՍՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 13Բ ՇԵՆՔԻ ԹԻՎ 30 ԲՆԱԿԱՐԱՆԸ ԼԻԼԻԹ ԳԱԳԻԿԻ ԲԱԴԱԼՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Լիլիթ Գագիկի Բադալյանի (1981թ.) դիմումը, ղեկավարվելով «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածով, ՀՀ կառավարության 1997թ. մարտի 14-ի թիվ 51 որոշմամբ, Վանաձոր համայնքի ավագանու 2001թ. մարտի 23-ի թիվ 21 և 2005թ. օգոստոսի 26-ի թիվ 212 որոշումներով՝ ***որոշում եմ.***

1.Հանձնարարել Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի բնակարանային տնտեսության և համատիրությունները համակարգող բաժնի գլխավոր մասնագետ Քաջիկ Թադևոսյանին՝ դիմելու ՀՀ կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Վանաձոր քաղաքի Թևոսյան փողոցի թիվ 13բ շենքի թիվ 30 երեք սենյականոց բնակարանի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար:

2.Վանաձոր քաղաքի Թևոսյան փողոցի թիվ 13բ շենքի թիվ 30 երեք սենյականոց բնակարանը 35 000 դրամով ուղղակի վաճառքի ձևով որպես սեփականություն՝ օտարել նշված բնակարանի վարձակալ՝ Լիլիթ Գագիկի Բադալյանին:

3.Վանաձոր քաղաքի Թևոսյան փողոցի թիվ 13բ շենքի կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ հողամասի համապատասխան չափաբաժնի նկատմամբ սեփականության իրավունքը ենթակա է անհատույց փոխանցման շենքի թիվ 30 բնակարանի վարձակալ՝ Լիլիթ Գագիկի Բադալյանին:

4.Համայնքապետարանի աշխատակազմի բնակարանային տնտեսության և համատիրությունները համակարգող բաժնի գլխավոր մասնագետ Քաջիկ Թադևոսյանին՝ Լիլիթ Գագիկի Բադալյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել բնակարանի առուվաճառքի և հողամասի անհատույց փոխանցման պայմանագիր՝ որպես նրա սեփականություն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2022թ. նոյեմբերի 17
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

17 նոյեմբերի 2022 թվականի N 803

### ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԲԱԶՈՒՄ ԹԱՂԱՄԱՍ Ա ԿՎ. 9 ՇԵՆՔ 9 ԲՆԱԿԱՐԱՆԻՆ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արտիկ Ղարախանի Ղարախանյանի դիմումը, 06.04.1978թ. օրդերը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, 18.05.2022թ. գույքի նկատմամբ իրավունքի (սահմանափակման) պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին Կ-18052022-06-0066 որոշումը, 11.05.2022 թվականի ըստ օրենքի ժառանգության իրավունքի թիվ 1581 վկայագիրը (նոտարական կոդ՝ 775-20220507-84-5888157), 11.05.2022 թվականի սեփականության իրավունքի թիվ 1580 վկայագիրը (նոտարական կոդ՝ 775-20220507-105-5888175), 07.04.2022 թվականի թիվ 1009 հայտարարությունը (նոտարական կոդ՝ 775-202204-103-5814104), 07.04.2022 թվականի թիվ 1008 հայտարարությունը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր քաղաքի Բազում թաղամաս Ա կվ. 9 շենքի 9 բնակարանին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր Վանաձոր ք., Վ. Համբարձումյան փողոց, 9ա շենք, 9 բնակարան:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2022թ. նոյեմբերի 17
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 նոյեմբերի 2022 թվականի N 804

## ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ «ԱՆԱՀԻՏ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ ՍՏՅՈՊԱՅԻ»-Ն ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր «ԱՆԱՀԻՏ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ ՍՏՅՈՊԱՅԻ» 2022 թվականի նոյեմբերի 16-ի թիվ 01/15294 հայտը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով և «Գովազդի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ պարբերությամբ՝ ***որոշում եմ.***

1. Բավարարել Վանաձոր քաղաքի Բաթումի փող. թիվ 14/1 հասցեում գործող անհատ ձեռնարկատեր «ԱՆԱՀԻՏ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ ՍՏՅՈՊԱՅԻ» հայտը՝ ավագանու սահմանած դրույքաչափերին համապատասխան համայնքի վարչական տարածքում՝ Բաթումի փող. թիվ 14/1 հասցեում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության և պայմանագիր կնքելու մասին:
2. Համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ եռօրյա ժամկետում հայտատուին տրամադրել համապատասխան թույլտվություն:
3. Համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ սահմանված կարգով հայտատուի հետ կնքել համապատասխան պայմանագիր:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2022թ. նոյեմբերի 17
ք.Վանաձոր

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

17 նոյեմբերի 2022 թվականի N 805

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ Կ. ԴԵՄԻՐՃՅԱՆ ԹԻՎ 8/7 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՅՈՒՐԻ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Յուրի Հայրապետյանի 03.10.2022թվականի թիվ 12196 դիմումը, Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 22082022-06-0074 վկայականը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 43,1-րդ կետով և 35-րդ կետի գ) ենթակետով՝ ***որոշում եմ.***

1. Վանաձոր քաղաքի Կ. Դեմիրճյան փողոց թիվ 8/7 հասցեում գտնվող, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող, Վանաձոր համայնքի սեփականությունը ճանաչված 18.36քմ մակերեսով մետաղական ավտոտնակը և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ 20.0քմ մակերեսով հողամասը վարձակալության իրավունքով, 10 տարի ժամկետով, տրամադրել Յուրի Հայրապետյանին:

2. Վանաձորի համայնքի ղեկավարին՝ Յուրի Հայրախետյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել ավտոտնակի և հողամասի վարձակալության իրավունքի պայմանագիր, իսկ աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին հաշվառել վերոնշյալ պայմանագիրը: Ավտոտնակի 1.0 քմ-ի համար ամսական վարձավճարի չափ սահմանելով 20(քսան) դրամ, իսկ հողամասի՝ 1.0քմ-ի համար ամսական 18 (տասնութ) ՀՀ դրամ վարձավճարով :

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2022թ. նոյեմբերի 17
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am


# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 նոյեմբերի 2022 թվականի N 806

## ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆ ՓՈՂՈՑ 2/6 ԵՎ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՓՈՂՈՑ 2-2/1-2 ՀԱՍՑԵՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ԱՐԱ ՍԱՄՎԵԼԻ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՈՐՊԵՍ ՄԵԿ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐ ՄԻԱՎՈՐԵԼՈՒ, Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆ ՓՈՂՈՑ 2/6 ՀԱՍՑԵԻ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արա Սամվելի Հակոբյանի դիմումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 19092022-06-0061 և թիվ 04072014-06-0029 վկայականները, ԱՐՍԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆ ՌՈՒԴԻԿԻ ԱՁ-ի կողմից տրված հողամասի հատակագիծը և եզրակացությունը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 8-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 143-րդ հոդվածի 11, 12, 13, 14 մասերով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետով՝ ***որոշում եմ.***

1. Միավորել Վանաձոր քաղաքի Հ. Թումանյան փողոց թիվ 2/6 և Թումանյան փողոց թիվ 2-2/1-2 հասցեներում գտնվող Արա Սամվելի Հակոբյանին սեփականության իրավունքով պատկանող 398.2քմ ընդհանուր մակերեսով հողամասերը համաձայն ԱՐՍԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆ ՌՈՒԴԻԿԻ ԱՁ-ի կողմից տրված հատակագծի:

2. Փոխել Վանաձոր քաղաքի Հ. Թումանյան փողոց 2/6 հասցեում գտնվող 0.02622հա մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը՝ բնակավայրերի բնակելի կառուցապատման հողերից՝ հասարակական կառուցապատման հողերի:

3. Սույն որոշման 1-ին կետում նշված գույքին տրամադրել փոստային հասցե՝ Վանաձոր Վանաձոր ք., Հ. Թումանյան փողոց, 2/6 հողամաս:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

*06901936*

2022թ. նոյեմբերի 18
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 նոյեմբերի 2022 թվականի N 807

### ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԱՎԵՏԻՍՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 49 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ԴՐԱ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՌԱՖԱՅԵԼ ԳԱՐԻԿԻ ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ռաֆայել Գարիկի Մելիքսեթյանի դիմումը, 17.03.1989թ. տրված անհատական բնակելի տան գույքային թերթը, 20.09.2022թ. տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի թիվ 3399 (նոտարական ակտի կոդ: 775-20220919-84-6276548) և թիվ 3400 (նոտարական ակտի կոդ: 775-20220919-84-6276634) վկայագրերը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, ՀՀ կադաստրի կոմիտեի 03.10.2022թ. հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր: 2022KACJNG), ԱՐՏՅՈՄ ՍԱՔԱՆՅԱՆ ՌՈՒԴԻԿԻ ԱՁ-ի կողմից տրված հողամասի, շինությունների հատակագիծը, շինությունների բնութագիրը և հաշվի առնելով այն, որ Վանաձոր քաղաքի Ավետիսյան փողոց թիվ 49 հասցեում կառուցած բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 283.3քմ մակերեսով հողամասը, դրա վրա կառուցված բնակելի նշանակության շինությունները չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ: Անհատական բնակելի տունը կառուցվել է 1957-1977թթ.-ին, բնակելի տան զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ հողամասի մակերեսը փաստացի կազմում է 283.3քմ: Ղեկավարվելով 10.06.2008թ. «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2021թ. փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ ***որոշում եմ.***

1. Ճանաչել Ռաֆայել Գարիկի Մելիքսեթյանի սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Ավետիսյան փողոց թիվ 49 հասցեի բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 283.3քմ մակերեսով հողամասի նկատմամբ:
2. Ճանաչել Ռաֆայել Գարիկի Մելիքսեթյանի սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Ավետիսյան փողոց թիվ 49 հասցեի բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ 283.3քմ մակերեսով հողամասի վրա գտնվող բնակելի նշանակության բոլոր շինությունների նկատմամբ:
3. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:
4. Սույն որոշման 1-ին կետում նշված գույքին տրամադրել նոր փոստային հասցե՝ ք. Վանաձոր, Վանաձոր Վանաձոր ք., Ա. Ավետիսյան փողոց, 49/1 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2022թ. նոյեմբերի 18
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 նոյեմբերի 2022 թվականի N 808

« ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՍՈՒԲՎԵՆՑԻԱՆԵՐ ՍՏԱՆԱԼՈՒ ԵՎ «ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԱՐՊԱՍ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՓՈՂՈՑՆԵՐԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՈՒՄ», «ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԱՆԿՏ ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՓՈՂՈՑԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՈՒՄ», «ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐԴԱՆԱՆՑ ՓՈՂՈՑԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՈՒՄ», «ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԼԽԱՎՈՐ ՓՈՂՈՑՆԵՐԻ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՈՒՄ», «ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՓՈՂՈՑՆԵՐԻ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ», «ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԹԻՎ 4 ՏՆԱԿԱՅԻՆ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ՇԵՆՔԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ», «ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒԳԱՐՔ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ» ՍՈՒԲՎԵՆՑԻԱՆԵՐԻ ՀԱՅՏԵՐԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 28 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 102-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՆՐԱՅԻՆ ԲԱՑ ԼՍՈՒՄՆԵՐ ԵՎ (ԿԱՄ) ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԵՎ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վանաձոր համայնքի ավագանու 07 հունիսի 2016 թվականի թիվ 33-Ն որոշմամբ հաստատված կարգը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 11-րդ, 37-րդ և 84-րդ հոդվածներով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածով՝ ***որոշում եմ.***

1. «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնքի 2023 թվականի բյուջեի հաստատելու մասին», «Հայաստանի Հանրապետության համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիա ստանալու և «Վանաձոր համայնքի Դարպաս բնակավայրի փողոցների հիմնանորոգում» սուբվենցիայի հայտին համաձայնություն տալու մասին», «Հայաստանի Հանրապետության համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիա ստանալու և «Վանաձոր համայնքի Սանկտ Պետերբուրգի փողոցի հիմնանորոգում» սուբվենցիայի հայտին համաձայնություն տալու մասին», «Հայաստանի Հանրապետության համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիա ստանալու և «Վանաձոր համայնքի Վարդանանց փողոցի հիմնանորոգում» սուբվենցիայի հայտին համաձայնություն տալու մասին», «Հայաստանի Հանրապետության համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիա ստանալու և «Վանաձոր համայնքի գլխավոր փողոցների լուսավորության համակարգի արդիականացում» սուբվենցիայի հայտին համաձայնություն տալու մասին», «Հայաստանի Հանրապետության համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիա ստանալու և «Վանաձոր համայնքի թիվ 4 տնակային մանկապարտեզի շենքի

կառուցում» սուբվենցիայի հայտին համաձայնություն տալու մասին», «Հայաստանի Հանրապետության համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիա ստանալու և «Վանաձոր համայնքի Շահումյան բնակավայրերի փողոցների լուսավորության համակարգի կառուցում» սուբվենցիայի հայտին համաձայնություն տալու մասին» և «Հայաստանի Հանրապետության համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիա ստանալու և «Վանաձոր համայնքի Գուգարք բնակավայրում մանկապարտեզի կառուցում» սուբվենցիայի հայտին համաձայնություն տալու մասին», «Վանաձոր համայնքի 2023 թվականի տեղական տուրքերի և վճարների տեսակները և դրույքաչափերը սահմանելու մասին» և «ՀՀ Լոռու մարզի Վանաձոր համայնքում տեղական վճարների գծով արտոնություններ սահմանելու և Վանաձոր համայնքի ավագանու 28 հոկտեմբերի 2020 թվականի թիվ 102-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» Վանաձոր համայնքի ավագանու որոշման նախագծերի վերաբերյալ կազմակերպել հանրային բաց լսումներ և (կամ) քննարկումներ՝ 2022 թվականի նոյեմբերի 18-ից մինչև դեկտեմբերի 02-ն ընկած ժամանակահատվածում:

2. Համայնքապետարանի պաշտոնական ինտերնետային կայք էջում տեղադրել հանրային բաց լսումների և (կամ) քննարկումների հրավեր, ինչպես նաև այն փակցնել համայնքի ղեկավարի նստավայրում՝ բոլորի համար մատչելի ու տեսանելի տեղում:

3. Հանրային բաց լսումների և (կամ) քննարկումների օր նշանակել 2022 թվականի դեկտեմբերի 02-ը:

4.«Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնքի 2023 թվականի բյուջեի հաստատելու մասին», «Հայաստանի Հանրապետության համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիա ստանալու և «Վանաձոր համայնքի Դարպաս բնակավայրի փողոցների հիմնանորոգում» սուբվենցիայի հայտին համաձայնություն տալու մասին», «Հայաստանի Հանրապետության համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիա ստանալու և «Վանաձոր համայնքի Սանկտ Պետերբուրգի փողոցի հիմնանորոգում» սուբվենցիայի հայտին համաձայնություն տալու մասին», «Հայաստանի Հանրապետության համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիա ստանալու և «Վանաձոր համայնքի Վարդանանց փողոցի հիմնանորոգում» սուբվենցիայի հայտին համաձայնություն տալու մասին», «Հայաստանի Հանրապետության համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիա ստանալու և «Վանաձոր համայնքի գլխավոր փողոցների լուսավորության համակարգի արդիականացում», սուբվենցիայի հայտին համաձայնություն տալու մասին», «Հայաստանի Հանրապետության համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիա ստանալու և «Վանաձոր համայնքի թիվ 4 տնակային մանկապարտեզի շենքի կառուցում» սուբվենցիայի հայտին համաձայնություն տալու մասին», «Հայաստանի Հանրապետության համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիա ստանալու և «Վանաձոր համայնքի Շահումյան բնակավայրերի փողոցների լուսավորության համակարգի կառուցում» սուբվենցիայի հայտին համաձայնություն տալու մասին» և «Հայաստանի Հանրապետության համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիա ստանալու և «Վանաձոր համայնքի Գուգարք բնակավայրում մանկապարտեզի կառուցում» սուբվենցիայի հայտին համաձայնություն տալու մասին», «Վանաձոր համայնքի 2023 թվականի տեղական տուրքերի և վճարների տեսակները և դրույքաչափերը սահմանելու մասին» և «ՀՀ Լոռու մարզի Վանաձոր համայնքում տեղական վճարների գծով արտոնություններ սահմանելու և Վանաձոր համայնքի ավագանու 28 հոկտեմբերի 2020 թվականի թիվ 102-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» Վանաձոր համայնքի ավագանու որոշման նախագծերի վերաբերյալ հանրային բաց լսումների և (կամ) քննարկումների վարման համար համայնքի ղեկավարի ներկայացուցիչներ նշանակել համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսական բաժնի պետ Վահե Գրիգորյանին և համայնքապետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի, արտաքին կապերի և տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի պետ Լիլյա Դավթյանին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2022թ. նոյեմբերի 18
ք.Վանաձոր